ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբեր 2019 թվականի N113-Ա

«ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի N 1661 -Ն որոշումը

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 900.000 (ինը հարյուր հազար) դրամ, նրա հետ կնքելով հանձնարարության պայմանագիր:
2. Հաստատել «Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը, անցկացման ծրագիրը, աշխատակարգը, ծախսերի նախահաշիվը և ժամանակացույցը՝ համաձայն 1-5-րդ հավելվածների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

28.11.2019

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ.նոյեմբերի 27-ի
N 113Ա որոշման

ԿԱԶՄ
«Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառման

1. Ն.Բաբայան - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /նախագահ/
2. Գ.Թադևոսյան - ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական
3. Ն.Դավթյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար
4. Մ.Գանդալյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետ
5. Ս.Ավետիսյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
6. Ա.Սիմոնյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար
8. Թ.Կարապետյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության,մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ
10. Վ. Արզումանյան - «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

28.11.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղակալ Գ.Թադևոսյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ. նոյեմբերի 27-ի
N 113- Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

«Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառման

Միջոցառման նպատակն է.

Ապահովել մարզի համայնքների մշակույթը ներկայացնող մասնակիցների ծանոթացումը, շփումը, համայնքների միջև մշակութային սերտ կապերի ամրապնդումը, փոխայցելությունների ընթացքում ցուցահանդեսների, համերգային ծրագրերի պատշաճ մակարդակով կազմակերպման միջոցով շնորհալի և երիտասարդ ստեղծագործողների բացահայտումը, մարզի համայնքներում մշակութային կյանքի ակտիվացումը:

Միջոցառմանը ներառվում են հետևյալ բնագավառները.

- կերպարվեստ և խեցեգործություն
- երաժշտարվեստ /խմբեր և անհատ կատարողներ/
- պարարվեստ / ժողովրդական և ժամանակակից/
- բեմարվեստ /ասմունք, հումոր, նմանակումներ և այլն/
- «Սյունիքյան գույներ» խորագրով Սյունիքի մարզի երիտասարդ նկարիչների ցուցահանդես,
- Մշակութային միջոցառումների կազմակերպում և համայնքների փոխայցելություններ, համերգային ելույթներ մարզի տարբեր համայնքներում:
- Այցելություններ Ա.Բակունցի տուն թանգարան, Գորիսի երկրագիտական թանգարան, Սիսիանի Ադոնցի անվան պատմության թանգարան, Ազգային պատկերասրահի Սիսիանի մասնաճյուղ, Կապանի երկրագիտական և Կապանի Շ.Մովսիսյանի անվան պատմության թանգարաններ, Մեղրի քաղաքի 17-րդ դարի Սուրբ Աստվածածին եկեղեցի, 17-րդ դարի Անապաստանաց վանք և Մեղրիի գեղագիտական կենտրոն:

28.11.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղակալ Գ. Թադևոսյան

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ. նոյեմբերի 27 -ի
N 113-Ա որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

«Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառման

Միջոցառման նպատակն է

Ապահովել մարզի համայնքների մշակույթը ներկայացնող մասնակիցների ծանոթացումը, շփումը, մշակութային համատեղ հաղորդակցության զարգացումը, համայնքների միջև մշակութային սերտ կապերի ամրապնդումը, փոխայցելությունների միջոցով մարզի համայնքների արվեստի գործիչների, շնորհալի երիտասարդների հայտնաբերումը:

Միջոցառման պատվիրատուն և կատարողը

«Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառման պատվիրատուն է՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանը, կատարողը՝ ՀՀ Սյունիքի մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

Միջոցառման մասնակիցները

«Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառումներին կմասնակցեն մարզի համայնքների արվեստի և գեղարվեստի դպրոցների սաներ, ստեղծագործող երիտասարդներ և պատանիներ, մարզի տարածաշրջանների երաժշտական համույթներ, ժողովրդական և ժամանակակից պարի խմբեր, անհատ կատարողներ, մշակութային գործիչներ:

Միջոցառման ժամկետը և վայրը

Միջոցառումները անց կկացվեն ս/թ նոյեմբեր դեկտեմբեր ամիսներին, մարզի համայնքներում:

Միջոցառման ընթացքը և ծախսերը

«Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառումները կկազմակերպվեն ըստ անցկացման ծրագրի, որտեղ արտացոլված են ծրագրի ժամանակացույցը, միջոցառումների անցկացման վայրը և ժամանակը:

Միջոցառման ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները կհամաձայնեցվեն կազմկոմիտեի հետ: Համայնքների փոխայցելությունների և մշակութային միջոցառումների մասնակիցների տեղափոխման տրանսպորտային ծախսերը կհոգան համայնքի ղեկավարները, իսկ միջոցառումների անցկացման հետ կապված կազմակերպչական ծախսերը՝ /դահլիճների տրամադրում, ձայնային տեխնիկայի ապահովում, արագ սնունդ և այլ ծառայություններ/ պատվիրատուի կողմից հանդես եկող կազմակերպությունը:

28.11 2019

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Գ. Թադևոսյան

Հավելված 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ. նոյեմբերի 27 -ի
N 113-Ա որոշման

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառման

h/h	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազար դրամ/
1	Տրանսպորտային միջոցների վարձակալություն	4216	125,0
2	Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	70,0
3	Հանրային սննդի ծառայություններ	4236	250,0
4	Նվերներ	4237	300.0
5	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	43.0
6	Մասնագիտական ծառայություններ	4241	87.0
7	Գրասենյակային պիտույքներ	4261	25.0
	Ընդամենը		900.0

28.11.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: TADEVOSYAN GRIGORII909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղակալ Գ.Թադևոսյան

Հավելված 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ. նոյեմբերի 27-ի
N 113 Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառման

h/h	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Վայրը
1	«Սյունիքյան գույներ» խորագրով նկարիչների ցուցահանդեսների կազմակերպում	նոյեմբեր դեկտեմբեր	Մարզի համայնքներ
2	Մշակութային փոխայցելություններ մարզի համայնքների միջև՝ կերպարվեստ և խեցեգործություն, երաժշտարվեստ և պարարվեստ, ստեղծագործական ձեռքի աշխատանքների ցուցադրություն-վաճառք, համերգային ելույթներ	նոյեմբեր դեկտեմբեր	Մարզի համայնքներ
3	Սիսիան համայնքի մշակութային միջոցառումների անցկացումը Քաջարան համայնքում	նոյեմբեր դեկտեմբեր	ք.Քաջարան
4	Կապան համայնքի մշակութային միջոցառումների անցկացումը Սիսիան համայնքում Այցելություն Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Սիսիանի Ադոնցի անվան պատմության թանգարան և Ազգային պատկերասրահի Սիսիանի մասնաճյուղ	նոյեմբեր դեկտեմբեր	ք.Սիսիան
5	Գորիս համայնքի մշակութային միջոցառումների անցկացումը Կապան համայնքում Այցելություն Կապանի երկրագիտական և Կապանի Շ.Մովսիսյանի անվան պատմության թանգարաններ	նոյեմբեր դեկտեմբեր	ք.Կապան
6	Մեղրի համայնքի մշակութային միջոցառումների անցկացումը Գորիս համայնքում Այցելություն Ա.Բակունցի տուն թանգարան, Գորիսի երկրագիտական թանգարան	նոյեմբեր դեկտեմբեր	ք.Գորիս
7	Քաջարան համայնքի մշակութային միջոցառումների անցկացումը Մեղրի համայնքում Այցելություն Մեղրի քաղաքի 17-րդ դարի Սուրբ Աստվածածին եկեղեցի, 17-րդ դարի Անապաստանաց վանք և Մեղրիի գեղագիտական կենտրոն	նոյեմբեր դեկտեմբեր	ք.Մեղրի

28.11.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Գ.Թադևոսյան